## 5. ԸԽՇԱՐՔԸԵՍ ԱՄԵՆԱՔԱԽԾԸՐ ՊԵՆԸ

*Մին թաքավըրըրու մին շատ կյըրթյած, ուսում առած ախճիգյ ա ինում։ Մին օր հյըրն ըխճըկանը ծեն ա տամ կոչտը, հըրցնում, թա ըխշարքումըս ամմենաքախծր պենը հինչն ա՞։ Ախճիգյն ասում ա՝ աղն ա։*

*Հյըրը հրաման ա տամ, վըեր իրյան ըխճըկանը քցին տուրմյան, նըստըցնեն։*

*Մին քանի օրան ետը թաքավըրըրը նորըմինան ա իրյան ըխճըկանը ծեն տամ, էլլա հյամին պենը հըրցնում։ Ախճիգյն էլլա յա ասում՝ աղն ա։ Թաքավըրըրը կզնըվում ա, հրաման տամ, վըեր ըխճըկանն իրյան երգյիրյան տուս քցին։*

*Թաքավըրըրեն ըխճըկանը տանում ըն մին հեռու տըեղ, օրիշ թաքավըրըրու վըեղում պեց թողում։ Տու մի ասըել, էտ վախտն էլ էտ երգյիրին թաքավըրըրեն նոքյարը տուս եկած ա ինում ըտըեղեքյ վըերա։ Հինց ըտըեղ էլ էտ ըխճըկանը պըտահում ա, ասում.— Ես վըեր վըերս ըմ տուս եկալ, քըզանա լյավ վըերս չըմ քըթընյական, եք քըզ տանըեմ մըեր տոն։ Ախճիգյն ասում ա.— Տու թաքավըրըրեն նոքյարն ըս, վըեր տանըես, թաքավըրըրն ինձ քու ծըեռքատ յոր ա ուննական, տու քյինյա մին կուճուր օթաղ չինի, ընդըեղ առըտուր ըրա, ինձ էլ կոչտըտ տար։*

Թաքավըրըին նըքյա̈րը քյինա̈մ ա տոն, մին կուճուր օթաղ չինում, ըտըըղ ըսկսում ծմըերուկ ծախըելը, էտ ըխճըկանն էլ ըտըղ ըխչադանք տամ, էտ ախճիգը իրեք մաճարմա յա տամ Թաքավըրըին նո̈քյա̈րին, համ էլ ասում.— Օրը մին մաճարմա կըծախըես, ամմըեն մինը մին խոսկավ, մին մաճարման էն խոսկավը, վըեր «աչկըեն դուր եկածն ա լոխճընան լա̈վըն», մինն էլ՝ «խըչըմաչ հըղըցեն յիրա̈ քչերը մնալ չընի», վերչինը՝ «մինչև աչկավըրը տըեսնաս վուչ, հըվատաս վուչ»։

Մին օր էլ Թաքավըրըրը ո̈իրա̈ն նո̈քյա̈րին քշտին մին շատ ղա̈շա̈նգյ ախճիգյ ա տըեսնում, օղում ա ո̈իրա̈ն ծըեոքը քցի, տրա հետ յեկ մըհըեու վա շոռ կյամ։ Վերչը, մըհանան էլ ա քթենում՝ նո̈քյա̈րըին քցիլ ա տամ ուշափըեն հետ ճոկած տղորանցը օթաղը, տանում ըն տամ ուշափըեն։ Օշափը տրան հըըցնում ա, Թա քու սիրած ախճիգյըտ ղաշանգյ ա՞։ Տա ասում ա.—Աչկըեն դուր եկածը լոխճընան լա̈վն ա։ Տրանա եաը օշափը տրան մին կոլա յա տամ, վըեր տանե ո̈իրա̈ն հետ ճո̈ւր պիրի։ Տա կոլան յոր ա օնում, քյինա̈մ ճո̈ւրը պիրում, օշափը կոլան տիրտըկցնում ա, մին նոռնը տամ տրան, Թա՝ կտանըես տաս քու սիրած ըխճըկանըտ։

Թաքավըրըին նո̈քյա̈րը նոռնը յոր ա օնում, քյինա̈մ տոն։ Հըըեննի Թաքավըրըը պըտահում ա։ Վըեր տըեսնում ա ո̈իրա̈ն նո̈քյա̈րը սաղ ա, լո̈ւցին կապ ա ինգյո̈ւմ, կըմկըմալով ասում.— Էքյուծ մըեր քյարվանը քյիննա̈կան ա օրիշ երգյիրա ապրանք պիրի, հիղիրվի, հանցու քյըըվանըեն նհըետ քյինա̈։

Նո̈քյա̈րը տանում ա ծըեոքըեն նոռնը տամ ո̈իրա̈ն նշընածըեն, ինքյը վըննըծըեոքը պընդըցնում, վըեր էքյալը քյըըվանըեն նհըետ հղե ինի, քյինա̈։

Էքյալը քյարվանը Թաքավըրըին նհըետ ո̈իրա̈նց քըղաքան տո̈ւս ա կյամ, քյինա̈մ օրիշ երգյիրում առըտուր անում պըըծնում, ետ տըեռնում։ Ետ կյա̈լիս մին խըշըմաչ հըղըցում մթըեն ըն ինգյո̈ւմ։ Թաքավըրըն ասում ա.—Քյարվանը վըեննը կըցըըեքյ, քչերը մնանք ըտըըղ։ Նո̈քյա̈րն ասում ա.—Չէ՛, խըշըմաչ հըղըցին քըշտին քչերը մնալը լա̈վ չի ինիլ, քյինա̈նք մին էրկու-իրեք վերստ, հետու վըեր կյանք։

Թաքավըրըը մին քանի մարթու նհըետ քյինա̈մ ա, հետու տըեղ վըեր կյամ, մնացածն ասում ըն՝— Դե, արտեն վըեր ընք եկալ, պըըծալ, մինգյեղ նորըմինա̈ն տեսս-տենը հըվըքըլա՞կան չընք քյինա̈նք, վըեր պեռները վըեր ընք կալալ, մնանք։ Թաքավըրըին ասում ա.— Դե լա̈վ, տուք ըք գյո̈ւղո̈ւմ, մնամ ըք, մնացեքյ։ Տահանք

մնամ ըն ըողեղ, ըողեղ էլ քոն ինո̈ւմ։ Ըռավոտը Թաքավըրըրըն մարթիքըլը կյամ ըն տըեսնում ղըշըղնըրըն տահանց յիրա̈ նըկած, մարթուցը շատըրըն կըտորած, մին քանիսըն էլ փըխճըցրած, քյար-վանը, ապրանքը-պըննըն էլ լոխ թըլանած, տարած։

Տրանա հետը քյինա̈մ ըն ո̈ւրա̈նց քաղաքը։ Թաքուհին էտ նո̈ւքյա̈րին քշտին ո̈ւրա̈ն կնգանըն անա փիս-փիս պըննըր ա ասում, վըեր սաքավ ո̈ւրա̈ն կըըեցալ չի պահե, սրա-նրա նհըետ շոռ կյա̈լիս ա իլա̈լ, իտի պինըրավ ա կըըեցալ էն մըեծ պալատը շինի, էնքան էլ նո̈ւքյըըրնե պահե։ Տղան օղում ա, վըեր քյինա̈ ո̈ւրա̈ն կնգանըն ըսպանե, մինգյել մըտկումն ասում ա.—Չէ, մինչև վըեր աչկավըս տըեսնամ վըեչ, հըվատալ չըմ։ Քյինա̈մ ա տըեսնում ո̈ւրա̈ն էն կուճուր բուտկեն տըեղը մին հունց պալատ վըեննը կըցըրած, վըեր Թաքավըրըրըն պըլատըն յիրա շոք ա անում։ Էտ տղան մտածում ա, թա իսկապես կնեգյըս հինչա̃վ պիտի շինած ինի էս պալատը, մինգյել ասում ա.—Հա̈լա̈ կենամ տըեսնամ սրա ախըրը հի̃նչ պիտի ինի։

Տու մի ասել, ո̈ւրա̈ն կնեգյն էտ պըլատըեն ըռաչին ղարաղուլ-չիքյ ա տիրա̈լ, հու վըեր կյամ ա թա նի մննե (շատ ըն ուզեցալ, վըեր նի մննեն), թողում չըն։ Տղան վըեր կյամ ա թա նի մննե, պա-հակնեն թողում չըն։ Տղան ասում ա, թա ինքյը հու վա, էլլա չըն թողում։ Տռանը քըմական ախճիգյն ասում ա.—Իրեքինչի խոսկն ասե, նոր տռռնը կըպենվա։ Տղան ասում ա.— Մինչև աչկավըս տըեսնաս վուչ, հըվատաս վուչ։ Տրանա հետը պահակնեն տռռնը պեց ըն անում, ախճիգյը եշում ա, տըեսնում կյըվողն ուրան նշա-նածն ա։ Ըողեղ ախճիգյն ասում ա, վըեր էտ պալատն ո̈ւրա̈ն տու-ված նուռնավն ա շինալ։ Ետնան նոռնը տամ ա ո̈ւրա̈ն, տղան եշում ա, տըեսնում էն ուշափըեն տուված նուռնըրըն մաշինը լոխ անկյին քարըր ա։ Ախճիգյն էտ քըրերան մինը պուկում ա տամ տղըեն, թա՝ տար զիրգյա̈րին տո, ինքյն ո̈ւրա̈ն հախը քե յա տը-լականե։ Տղան էտ մին քարը տանում ա տամ զիրգյա̈րին, զա̈րգ-յա̈րը մին քսակ վըեսկե յա տամ, պիրում ա տռնե։ Ախճիգյը թա՝ տըեսնում ը՞ս, վըեր էտ քըրերըն հա̈լա̈ կեսին կեսն էլ չըմ խար-ջալ, շատը կեննում ա։

Տրանա եռն ախճիգյը մըեծ քյեփ ա սարքում, նըշըընածըն ասում.—Ըխշարքումըս հիշքան Թաքավըրըրնե կա, լոխճինին ծեն տո, թող կյա̈ն։ Տղան ըխշարքըես Թաքավըրըրնըրըն լոխճինին ծեն ա տամ, կյամ ըն։ Ըխճըկանը հա̈րն էլ ա ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրավը կյամ։ Լա̈վ ըստոլնե յըն ինո̈ւմ սարքած, ըխշարքըես տակըեն հինչ

վըեր կա, լոխ էտ ըստուկներեն յիրա յար, մենակ ծըրան հորը մինդյել նձղիր-վեղիրներեն ըստուկներեն աղ չի տինում։ Ըխճը-կանը հճըրն ասում ա.—Ըստուկնըետ շատ լըծվ ա սարքած, վըեչ մին պեն պակաս չի, մենակ մղափուն, վըեր աղ չի կա, առանց աղ վըեչ մին պեն օտվում չի։ Ախճիգյը թա՝ աղը հինչ ա՞, վըեր առանց տըան յոլլա չըք քյինում։ Թաքավըերն ըստըեղ մաննը կծում ա, ըխճըկանը եշում, եշում, մըեննը քցում, ճինճնչում։ Ախճիգյն էլ թա՝ էտ խոսկըեն հետև տու ինձ քու երգյիրատ տուս ըս քցյալ, դո՛ւղերը քցյալ, մեհենդյ տըեսե՞լ, վըեր ըխշարքումըս աղան քախծըր պեն չի կա։